Եւ նըմա փառք յաւիտեանս անլըռական,
Ընդ Հօր, Հոգւոյըն ճշմարտի միանգամայն,
Այժմ և յաւէտ և յապագայն յարաձգական,
Եւ անըսպառ և ի անկէտ միշտ յաւիտեան. Ամէն:

1620-1·

Զանպիտան հողս և զանարհեստ գրչակս զպիտակ անուն զխաչքո՝ յիշե-ցէք, ով եղբայրք, ի մաքրափայլ յաղօթս ձեր, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն. Գրեցաւ թվ. ՌԿԹ. Նոյեմբ. 17: *[Ճա-րական, ի Ս. Ղազար]:*

1623·

Գրեցաւ գիրքս ի թվին ՌՀԱին, ի յունիս ամսոյ ԻԸին, ի յաշխարհս Բողաց, և ի թագաւորութեանն Գ. Զիկմունտին, ի քաղաքիս Լուցքայ, ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային և առաջին մարտիրոսին: Արդ գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ բիւր քանքարոյ պարտական ՌՌ. ԺԺ. ՃՃ. (Գ.) Է. 33. ՄՄ. (Սիմէոն) իրիցուիս, որ միայն անուամբ եմ և գործովս հեռացեալ: Բայց ետ գրել զսա ըղձմամբ և սրտիւ փափագանօք Ցովհաննէս սրբազան քահանայն, ի վայելումն անձին իւրոյ և իւրոցն, յիշատակ անջըն-ջելի. զոր Տէր Աստուած բարով վայելել տացէ երկար ժամանակօք. ամէն: [Ներս. Լամբրոն. յԵրուսաղէմ:]

1624·

... Տեսեալ զսորայս (Աւետարանի) անճառ փրկագործութեան զխորհուրդ, Պր. պայազատ խոճա Մարքոն, որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց, և ետ յիշատակ ի դուռն Հաճակատար Ս. Աստուածածնին, վասն իւր և իւր ծնողացն հոգւոյն, Նուրպէկին, և մօրն Եղիսաբեթին, և կենակցին իւրոյ Քասքոյին, և դստերացն իւր՝ Հօսքային և Հանուչքային, և մեծ պապին Մա-թիաշին, և մամուն՝ Վաւվաւին:... Բայց յորժամ գրեցաւ սուրբ Աւետա-րանն՝ էր թիւ հայկազան տումարի ՌՀԳ. գրեցաւ և աւարտեցաւ ի հռչա-կաւոր և յաստուածարնակ մենաստանիս՝ Ս. Օգսենդայ, ի հայրապետութեան Տեառն Տէր Մելքիսեդ կաթողիկոսին, ի թագաւորութեան Օլախաց երկրիս Ռատուլին. ձեռամբ Նուաստ և անարժան հող և փոշի Ղազար վարդապե-տին. որ անուամբ միայն և ոչ գործով... որ եմ առաջնորդ սուրբ ուխտիս և Օլախաց երկրիս, ողորմութեամբն Քրիստոսի: Արտասուալից պաղատա-նօք հայցեմ ի ձէնջ զհանդիպողքդ այսմ աստուածաշունչ մատենիս, մի՛ մե-ղադրէք. երկրիս հարկապահանջութիւն շատ էր. ամէն դատ և դատաստան առ մեզ կու գային, չունէաք խաղաղութիւն. կէս մի ի յայս քաղաքս գրե-լով և կէս մի այլ քաղաք գրելով. և այսպէս շրջագայելով աւարտեցաք. թէ-պէտ գոյր կարողութիւն Քրիստոսի կարող զօրութեամբն՝ այլ գեղեցիկ գրել